Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15966

321.95
T-92

1906

№ 7 Գրադարան «Յառաջ»-ի № 7

68

Կ. ՊՐԱՄՊՕԼԻՆԻ

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ

A. Badikian

ԹԱՐԳՄ. ՏԻԿԻՆ ՀՐԱՆՈՅՇ

Գինն է 5 կոպ.

Երրորդ հրատ.

ԹԻՖԼԻՍ
1906

321.95
Դ-92

13 JAN 2010
26 SEP 2006
ԷՐՏ. ԴՈ. ԵՏ.

Կ. ԳԲԵՄԳՈԼԻՆԻ

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ

ԹԱՐԳՄ. ՏԻԿԻՆ ՀՐԱՆՈՅՇ

ԹԻՖԼԻՍ
Էլէֆտրաւարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մադաթեան փող. № 5
1906 (173)

23.07.2013

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մյասնիկյանի անվան

21910-59

ԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ գիւղի և քաղաքի բանւորները մէկ-մէկու ձեռք մեկնեն,

Եթէ նրանց մէջ ամբանայ արդարութեան հաւատը,

Եթէ նրանք ըմբռնեն, որ բոլոր մարդիկ հաւասար են և հետևապէս ոչ ոք իրաւունք չունի միւսի տէրը լինելու և նրա հաշւով ապրելու, որ բոլորը պարտաւոր են մասնակից լինելու կեանքին անհրաժեշտ ընդհանուր աշխատանքին։

Եթէ մարդավայել ապրելու համար, — այսինքն, ազատ լինելու, իր գլխին իշխող չունենալու, իր աշխատանքի ամբողջ արդիւնքը վայելելու,—եթէ այդ բոլորի համար բանւորներն իրարից զատւած չապրեն, չմրցեն իրար դէմ և գործնականապէս հետևեն Քրիստոսի՝ «սիրեցէք միմեանց, որպէս եղբայրներ» պատւիրանին և ամեն տեղ միութիւն կազմեն,

Այն ժամանակ հետզհետէ միացող բանւորների դիմաց, կոչնչանայ հասարակական անարդարութիւնը, ինչպէս որ անյայտանում է խաւարը ճաճանչափայլ արեգակի առաջ։

Այն ժամանակ աշխարհը կվերանորոգւի. կգայ երջանիկ ու լուսաւոր դարեշրջանը, կգայ այն «երկնային արքայութիւնը», որին այնպէս փափագում էր Քրիստոսը։

Ձգտէք դրան, բանւորներ։ Եթէ ոչ ձեզ համար, գոնէ ձեր զաւակների համար ձգտէք։

Համախմբւեցէք, միութիւն կազմեցէք։ Դա անհրաժեշտ է ձեզ, ձեր կանանց, ձեր երեխաների հա-

մար։ Դա անհրաժեշտ է, որպէսզի պաշտպանէք ձեր ամենակենսական շահերը, որպէսզի ձեռք բերէք ձեր անհերքելի իրաւունքները, որպէսզի կարողանաք իրականութիւն դարձնել ձեր՝ աշխատաւոր դասակարգի անհրաժեշտ ազատութիւնը։

Աշխատաւորներ, յանուն ձեր և բոլորի շահերի, հաւատացէք բարուն և կարողացէք ցանկալ այդ բարին, ոտքի կանգնեցէք, որպէսզի հաստատուի արդարութիւնը։

Միայն այս ճանապարհով դուք կարող էք Քրիստոսի իսկական հետևողները դառնալ և կըհասնէք այն նպատակին, որ քարոզում էր Նա և որի համար Նա և ուրիշ նշանաւոր մարդիկ նահատակուեցին, այնպէս մեծահոգութեամբ զոհուեցին։

Կ. ՊՐԱՄՊՕԼԻՆԻ*)

---

*) Կ. Պրամպօլինին իտալացի նշանաւոր սոցիալիստ է։ Ծնուել է 1859 թ. յայտնի է դարձել իբրև սոցիալիզմի պրօպագանդիստ բանուորների և գիւղացիների շրջանում. հիմնել է «Quistizia» սոցիալիստական լրագիրը. 1890 թուականից պատգամաւոր է իտալական պարլամենտում։

Ծան. թարգմանչի։

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԴՐՕՒԹԻՆԸ

A. Bed...

Գիւղացիներ.

Շատ քիչ բանուորներ կան, որոնք ձեզանից վատ են ապրում։

Համեմատելով ձեզ հետ, քաղաքի շատ բանուորները հարուստ կարող են համարուել։

Եւ իսկապէս. ի՞նչ ուրախութիւններ ունիք դուք կեանքում։ Քաղաքակրթութեան որ գովաբանուած բարիքներից էք օգտուում։

Ի՞նչ օգուտ, ի՞նչ շահ բերին ձեզ գիտութեան, գեղարուեստի, արդիւնագործութեան առաջադիմութիւնները։

Լեռների միջով տուներներ—(ստորերկրեայ ուղի)—են անցկացրած. պարանոցները կտրտուած են ջրանցքներով։ գործարանների անհամար արհեստանոցներում դղրդում են մեքենաները, որ միլիոնաւոր մարդկանց գործ են տուել և կարծես երկրի վրայ լիութեան դրախտը ստեղծած լինէին։

Շոգեկառքեր, վիթխարի շինութիւններ, հեռագիր, տպագրական մեքենաներ, թատրոններ,

փառահեղ պալատներ, յուշարձաններ են շինուած։ Երևան են եկել գիտնականների աշխատութիւններ, արուեստագէտների օրինակելի գործեր, հազարաւոր գիւտեր։ Բազմաթիւ յարմարութիւններ և բաւականութիւններ են հնարուած, որոնցով հպարտանում է մեր դարը և որոնցից օգտուում են հարուստները։

Բայց ինչ օգուտ էք ստացել դուք այդ բոլորից։

Ձեր դրութիւնը նոյնքան խղճալի է, որպէս մէկ դար առաջ, իսկ մի քանի պարագաներում— աւելի ևս վատ։

Գարնանը և ամառը, երբ հարուստները, ազատ ժամանակ ունենալով, գալիս են գիւղերը մաքուր ու թարմ օդ ծծելու,—դուք աշխատում էք օրական 14, նոյնիսկ 16 ժամ, սկսած արևածագից և աւելի կանուխ, մինչև ուշ երեկոյ։ Իսկ ձմեռը, երբ ձեր աղա-կալուածատէրերը քէֆ են անում քաղաքներում, գիշերային զւարճութիւնների ժամանակ շռայլելով ձեր քրտինքով ձեռք բերած փողերը,—դուք ստիպւած էք ապրելու անասունների և թռչունների հետ միասին գոմերում, գարշահոտութեան մէջ, խեղդուկ օդում։

Ձեր աղքատիկ խրճիթներում թագաւորում է նեղւածքութիւնն ու կեղտը։ Հիւանդութիւնները ձեր ընտանիքներից անպակաս են։ Ձեր ուտելիքն են կազմում՝ սոխը, գետնախնձորը, թանէսպասը, կորեկ հացը և միայն երբեմն ցորեն

հաց, իսկ մսի երես դուք համարեա թէ չէք տեսնում։

Դուք խմում էք անպէտք գինի, իսկ շատ տեղերում նեխւած, վարակւած ջուրը, որ շատ անգամ առաջացնում է այդ բոլոր հարինքները, իր հետ բերելով և հազարաւոր մահերը։ Եւ քիչ, շատ քիչ է պատահում, որ դուք լաւ խաղողի գինի խմէք։

Դուք, տաժանակիր աշխատանքների մատնւած ոճրագործների նման, մեխւած էք հողին, որը ձերը չէ, մեխւած էք բնակարաններին, որը նոյնպէս ձերը չէ։ Երբ կարիքը ձեզ ստիպում է փող կամ աշխատանք ճարել, դուք գնում էք շուկայ՝ միակ տեղը, ուր բաց է ձեր ճանապարհը, այնտեղ է ձեր զբօսանքը, այնտեղ են ձեր զւարճութիւնները, այնտեղ է ձեր ամբողջ աշխարհը։

Դուք ոչ ժամանակ ունիք և ոչ էլ միջոց՝ սովորելու, կամ գէթ ձեր երեխաներին կարդալ—գրել սովորեցնելու և այդ պատճառով էլ դուք մեղաւոր չէք, որ տգէտ էք մնում։ Եւ ձեզ առաջւայ նման արհամարում են, որպէս «ռամիկների», որպէս ստոր դասակարգի մարդկանց, չը կամենալով իրաստովանել, որ դուք նոյնպէս վերին աստիճանի օգտակար և արժանի մշակներ էք և որ ձեր երախտիքը գնահատել տալու համար ձեզ պակասում է միայն կրթութիւնը։

Երբ դուք ծխախոտ էք քաշում, ձեր կալ-

ւածատէրերը և քահանան, որ սովորաբար միշտ համամիտ է նրանց հետ, իսկոյն խօսում են ձեր վարք ու բարքի ապականութեան մասին։ Իսկ երբ վազում էք աղտահոտից էլ կեղտոտ գինետունը՝ օղի խմելու, այն ժամանակ խօմ խօսք էլ չեն գտնում ձեզ կշտամբելու համար։

Իսկ տօն օրերին, երբ ձեր կանայք, որ աշխատում են ձեզ նման, նոյնիսկ ձեզանից էլ աւելի, մի քիչ աւելի լաւ են հագնւում, քան լի օրերը,—խանումները, որ ապրում են շքեղութեան մէջ, որ ձեռնոցներ ու փետուրներով զարդարւած գլխարկներ, մետաքսէ զգեստներ են հագնում, վրդովւում են և վայնասուն բարձրացնում, թէ հայ—հարայ «գեղջկուհիներն» էլ շռայլութեան են հետևում։

Սակայն ճիշտ է և այն, որ դուք ընտանի կենդանիների նման աշխատում էք, աշխատում էք նոյնիսկ աւելի քան ձեր եզները միևնոյն ժամանակ ուտում—խմում էք շատ վատ, իսկ կորցնելով առողջութիւնը, ընկնում էք հիւանդանոց, ողորմութեան համար ձեռք էք կառկառում և աղքատանոցի գթութիւնն հայցում։

Եթէ դուք գտնւում էք ուրիշի ձեռքի տակ—այսինքն եթէ մշակի, կառապանի, հովւի և այլն պաշտօն էք կատարում, դուք ստանալով միայն ամենաանհրաժեշտ հագուստը և մուրացկանի վճար—օրական միայն մի քանի կոպէկ, ամբողջ տարին պարտական էք ձեր աշխատանքը տալ

կալւածատիրոջը կամ աղային և ճորտերի ու հպատակների նման՝ գտնւել նրանց լիակատար իրաւասութեան տակ։

Եթէ դուք կապալառու էք, բացի ձեր գործադրած աշխատանքից, պէտք է ահագին կապալավարձ տաք, որը ձեզ կամաց-կամաց սնանկութեան է հասցնում։

Եթէ դուք հողը կիսովի էք մշակում, դուք ինքներդ գիտէք, որ այդ կիսովին համարեա միշտ գոյութիւն ունի միայն խօսքով, իսկ իրականութեան մէջ նա միայն մի ծաղր է ձեզ վերայ։ Եւ իսկապէս։ Դուք պարտաւոր էք ընծաներ տալ, մի քանի տեղերում նոյնիսկ շատ թանկագիները։ Սեփական միջոցներով կերակրել անասունների (մէկ կամ մի քանի, նայած կապալով վերցրած հողի քանակին) և կիսել կալւածատիրոջ հետ, կամ բարձր վարձ տալ ձեր բռնած շինութեան համար, ձեր հաշւին սերմացու գնել, թէ ձեր և թէ հողատիրոջ բաժնի համար։ Հողը հերկելու դէպքում, դուք պարտաւոր էք վճարելու որոշ տուրք, իբրև տոկոս աշխատաւոր անասուններից օգտւելու համար։ Դուք պէտք է կալւածատիրոջ համար աշխատէք՝ հող կրէք, մառան շինէք կամ նորոգէք, փայտ կրէք, քար կրէք ճանապարհների համար և այլն և այլն, այդպիսով դուք թողնելով ձեր սեփական գործերը, ուրիշ աշխատաւորների գործն էք խլում, որոնք ձեզ անիծում են։ Վերջապէս դուք նւէր-

ներ պէտք է տաք կառավարչին, հակառակ դէպքում նա. ձեզ համար մի կատարեալ բռնակալ կը-դառնայ։ Այս բոլորին աւելացրէք նաև այն, որ շատ տեղերում դուք տանում էք նաև այն կապալառուների ճնշումները, որոնք հողը կապալով վերցնելուց յետոյ, աւելի ծանր պայմաններով ձեզ են տալիս։

Այսպիսով, դուք գրպանում մի կոպէկ անգամ չունենալով, հարկադրւած էք լինում չնչին գնով ծախել ձեր արդիւնքները, իսկ յետոյ ձեզ համար անհրաժեշտ բաները խանութպանից պարտքով վերցնել։ Ամեն տեսակ զոհողութիւններ անելով և ամեն տեսակ ստորացումներ կրելով, դուք կորցնում էք և այն տնտեսութիւնը, այն մի քանի կոպէկները, որ թողել են ձեզ ձեր ծնողները. և հետևանքն այն է լինում, որ դուք պարտքերով ծանրաբեռնւած, վերջի վերջոյ ստիպւած էք լինում հեռանալ այն հողից, որին դուք պտղաբեր էք դարձրել։

Մուրացկանութիւն կամ աղքատանոց... Եթէ այնտեղ տեղ գտնուի,—ահա ձեր գիւղացիական աշխատանքի վարձատրութիւնը, ահա թէ ինչ է սպասում ձեզ ծերութեան օրերին։

Ձեզանից քանիսն են այդ օրին ընկնում։ Քանի քանի գիւղացիական ընտանիքներ քայքայւած են այդպէս և դեռ քանիսը ճիգ են թափում՝ կաշուից դուրս գալով... Բայց նրանք էլ միևնոյն վախճանին կը հասնեն։

Աշխատելով տասը, քսան, երեսուն տարի, թրջելով օտարի հողը ձեր և ձեր ծնողների, կանանց, երեխաների քրտինքով, արդիւնաբերելով չգոմբաւոր բուբլիներ—(խաղող, հաց, գինի և այլն),—դուք արտասուալից աչքերով հեռանում էք՝ աղքատ և պատառոտւած, որպէս Աւետարանի Ղազարոսը և մոռացւած, որպէս անապատան շները և պէտք է թափառէք, ձեր կեանքի վերջին օրերը անցկացնելով դաժան և անտանելի տառապանքների մէջ։

Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ

Կալւածատէրերը.—պատասխանում էք դուք։

Ո՛չ։ Թոյլ տուէք, որ մենք պատասխանենք այդ հարցին, մենք, որ ոչ միայն կալւածատէրերի բարեկամները չենք, այլ նոյնիսկ երկար տարիներ մաքառել ենք նրանց դէմ՝ յօգուտ բանւոր դասակարգի շահերի։

Եւ մենք պատասխանում ենք.—ոչ, մեղաւորը դուք ինքներդ էք։

Կալւածատէրերը գիւղերում այնպիսի մարդիկ են ճարում, ինչպիսին դուք էք, որ համաձայնում են ծանր պայմաններ կապել, այսինքն չնչին վարձատրութեամբ ամբողջ օրն աշխատել. նրանք դրանից էլ օգտւում են։ Մի՞թէ դուք էլ նոյնպէս չէիք վարւի, եթէ նրանց տեղը լինէիք։ Եթէ ձեզանից մէկն ու մէկը, օգտւելով հանգամանքներից, կամ շատ ու քիչ անազնիւ միջոց-

ների օգնութեամբ հարստանում է, մինթէ նա տարբերում է միւս կալւածատէրերից։

Այսպէս ուրեմն, անհեթեթութիւն է կշտամբել կալւածատէրերին այն բանի համար, որ նրանք վարում են բոլորովին բնական ձևով, այսինքն անում են այն, ինչ որ կանէր, նրանց հասարակական դրութեան մէջ գտնուող, ամեն մի մարդ։

Եթէ դուք կրակին այնքան էք մօտեցել, որ այրուել էք, ինչ, ուրեմն կրակն է մեղաւոր այդ բանում։ Մեղաւորը դուք էք, որովհետև չպէտք է այդքան մօտենայիք։

Եթէ դուք գետի մէջ լողանալիս խեղդուիք, մինթէ գետն է մեղաւոր։ Մեղաւորը դուք ինքներդ էք, որովհետև նախ քան ջուրն ընկնելը, պէտք է լող տալ սովորէք։

Եթէ դուք շատ կորեկ հաց էք ուտում և ստամոքսի հիւանդութիւն ստանում, մինթէ կորեկ հացն է մեղաւոր։ Մեղաւորը դուք էք. հարկաւոր է քիչ ուտել այդ ծանր կերակրից, որովհետև նա ստամոքսի համար վնասակար է և քիչ սննդարար։

Նոյնը կարելի է ասել, կալւածատէրերի հետ կապած ձեր պայմանների մասին։

Այն պայմանները, որոնցով դուք հողը կապալով կամ կիսովի էք վերցնում նրանցից, կամ աշխատում էք նրանց մօտ իբրև մշակ, տաւարած և այլն, եթէ ներկայումս այնպէս են, որ դուք ոչ միայն կեանքին անհրաժեշտ միջոցները

չէք կարողանում վաստակել, այլ վերջ ի վերջոյ աւերուում էք, այդ բանում մեղաւորը դուք էք։

ՄՐՑՄԱՆ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ. ՊԷՏՔ Է ՈՉԸՆՋԱՑՆԵԼ ՆՐԱՆ

Ինչո՞ւ իսկապէս կեանքի պայմանները այսքան ծանր են։

Որովհետև դուք այն ձևով էք վարում, որ նրանք անխուսափելիօրէն պէտք է ծանր լինին ձեզ համար։

Դուք ինքներդ, առանց նկատելու, միայն խօսքերով էք բարի քրիստոնեաներ, իրականապէս ոտնակոխ էք անում Քրիստոսի տուած սիրոյ, եղբայրութեան, միութեան ուխտը, որ մարդկային բարօրութեան որպէս հիմք պէտք է ծառայէ։ Փոխանակ իրար եղբօր պէս վերաբերուելու, փոխանակ իրար օգնելու, դուք պատերազմում էք իրար դէմ որպէս թշնամիներ—և դրանումն է ձեր թշուառութիւնների պատճառը։

Տեսէք իմ ասածը ճիշտ չէ՞։

Դուք գիւղատնտեսական աշխատանքի մշակութեան էք մտնում։ Ձեզանից իւրաքանչիւրը պայմանաւորուում է կալւածատիրոջ հետ, միրոպէ չմտածելով միւս ընկերների մասին և աշխատում է, ինչ պայմանով էլ լինի, մի տեղ գտնել։ Եւ եթէ, ընտանիքով ծանրաբեռնուած, ձեզանից մէկը, դիցուկ, 150 ռուբլի վարձագին է պահան-

ջում տարեկան, գալիս է մէկ ուրիշը, որ 100 բուբլիով է համաձայնում, նրանից յետոյ գալիս է մի երրորդը, որ բաւականանում է 80 բուբլիով, վերջապէս մէկն էլ պահանջում է 50 բուբլի և այլն։ Պարզ բան է, որ կալուածատէրը կը-վարձի նրան, որ ամենաքիչ վարձն է պահանջում, և ում կարող է պնդել, որ նա անիրաւացի է։

Եւ այսպիսով գիւղատնտեսական բանուորնե-րի վարձը այնքան է պակասում, որ նրանք ըստ-իպւած քաղցած են մնում։

Այժմ վերցնենք կիսովին։ Այստեղ էլ դուք աշխատում էք մէկդ միւսից առաջ անցնել, աշ-խատում էք գերազանցել միմեանց թանկագին ընծաներ տալու և աւելի վատ պայմաններ ընդունելու մէջ։ Իսկ կալուածատէրը, հասկանալի է, որ շատ գոհ կլինի՝ ձեզանից շատ մեծ շահ ստանալու համար։

Վերջապէս՝ ինչ է կատարւում կապալով հող վերցնելու ժամանակ։ Այս դէպքում էլ դուք կատաղի կռիւ էք մղում, մէկ մէկուց հող խլելու համար։ Այն կալուածը, այն հողը, որ մի քանի տարի սրանից առաջ 200 բուբլով էր կապալով տրւում, այժմ դուք 350—400—500 բուբլիով, նոյնիսկ աւելի գնով էք վերցնում։

Այս բոլորից միթէ պարզ չէ, որ ձեր քայքայման մէջ դուք ինքներդ էք մեղաւոր։ Միթէ պարզ չէ, որ եթէ կապալագները այդպէս բարձր են, որ մշակների վարձը այդքան քիչ է, եթէ

Կիսովի ցանքս անողների պայմանները այդքան ծանր են, այս բոլորը այն պատճառով, որ դուք ինքներդ էք այդ ուզում։

Այժմ, երբ արդէն պարզւեց, որ ձեր աղքատութեան պատճառը այդ կոյր, թշւառ, հակաքրիստոնէական կռիւն է մէկ-մէկու դէմ և եթէ դուք ուզում էք բարելաւել ձեր դրութիւնը, այն ժամանակ ձեզ համար պէտք է պարզ լինի և այն ուղին, որով դուք պէտք է առաջ ընթանաք։

Անհրաժեշտ է, որ այդ մրցումը վերանայ. անհրաժեշտ է, որ դուք ճշմարիտ քրիստոնեաներ դառնաք։ Փոխանակ իրար դէմ պայքար մղելու, դուք պէտք է միմեանց օգնութեան ձեռք մեկնէք, որպէսզի միասին կարողանաք ձեր դրութիւնը բարելաւել։

Ի՞ՆՉ ԵՆ ԱՐԵԼ ՄԻԻՍ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

Ես արդէն ասացի, որ քաղաքային բանուորները, մանաւանդ մեծ արդիւնագործական կենդրոններում, ընդհանուր առմամբ, աւելի լաւ են ապրում, քան թէ դուք, գիւղացիներդ։

Ի՞նչն է դրա պատճառը։ Գուցէ այն, որ նրանց քաղաքացի տէրերը, կամ կապիտալիստները գիւղի կապիտալիստներից լաւ են։

Բոլորովին ոչ։ Քաղաքում էլ, ինչպէս և գիւղում, կապիտալիստ-աղաները բնականաբար պէտք է աչքի առաջ ունենան միայն իրանց շահը և

դրա համար էլ աշխատում են հարկաւոր աշխատանքները կատարել տալ՝ որքան կարելի է քիչ ծախսով, այսինքն նրանք աշխատում են իրանց բանւորներին որքան կարելի է քիչ վճարել։ Բայց քաղաքներում նրանք գործ ունին աւելի զարգացած և համախմբւած բանւորների հետ, որոնք չէին ցանկանայ ձեզ նման ամբողջ օրն աշխատել մի քանի կոպէկի համար, այդ պատճառով էլ կապիտալիստներն ստիպւած են նրանց աւել վճարել։

Այժմ հարցնում եմ. ինչո՞ւ դուք չէք կարողանում անել այն, ինչ արել են քաղաքային բանւորները։ Մի՞թէ դուք էլ նրանց նման՝ մսից ու ոսկորից կազմւած մարդիկ չէք։ Եւ մի՞թէ չկան այնպիսի երկրներ, ինչպէս Շվեցարիան, Հոլլանդեան, Դանիան և այլն, ուր գիւղացիք արդէն իրանց կեանքը այնպէս են բարելաւել, որ ձերի հետ համեմատած, նա երազ է թւում։ Օրինակ Անգլիայում գիւղացին ամեն օր միս է ուտում, և վարձկան հողագործը այնպիսի առատ վարձատրութիւն է ստանում, որ հնարաւորութիւն ունի՝ գեղեցիկ տուն իր փոքրիկ պարտէզով, յարմար կահաւորւած սենեակներ, սպիտակեղէն, զգեստներ ունենալու և կրթութիւն ստանալու։ Աւստրալիայում գիւղացիները աւելի լաւ են ապրում։

Իսկ դո՞ւք։

ԳԻՒՂԱՑԻՆԵՐ ՄԻԱՑԷՔ

Դուք էլ կարող էք ձեռք բերել միևնոյն բաները, եթէ ընթանաք այն ուղիով, որի վրայով շատ տարիներ է, ինչ գնում են ձեր աշխատանքի—ընկերները։ Նրանք էլ ձեզ նման առաջ աղքատ էին, նոյնիսկ աւելի աղքատ, քան թէ դուք և այդ այն պատճառով, որ նրանց մէջ էլ գոյութիւն ունէր միևնոյն կոյր և անգութ մրցումը, որ տիրում է ձեր մէջ։

Բայց նրանք հասկացան իրանց սխալը, հասկացան, որ մրցումը տանում է դէպի քայքայում. նրանք կանգնեցին սեղմ միութեան ճանապարհի վրայ և այդպիսով քայլ առ քայլ կարողացան իրանց վիճակը բարւոքել և դեռ շարունակում են աշխատել այդ ուղղութեամբ։

Գիւղացիներ, հետևեցէք նրանց օրինակին։ Ի զուր տեղը ժամանակ մի կորցնէք հողատէրերին անիծելով. խոստովանեցէք, որ ձեր թշւառութիւնների մէջ մեղաւորը դուք ինքներդ էք և եթէ ուզում էք, որ այդ թշւառութիւններին վերջ լինի, ոչնչացրէք ձեր միջի մրցումը, համախմբւէք, միութիւններ կազմեցէք։

Ինչպէս որ գոյութիւն ունին երկաթուղային ծառայողների, գրաշարների, գլխարկ կարողների և այլն միութիւններ, նոյնպէս և դուք պէտք է համախմբւէք, միութիւն կազմակերպէք։ Այդ միութիւնը պէտք է սերտ կերպով կապէ բոլոր գիւ-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ք. Երևան, А. Мясникян

ղացիներին, գիւղատնտեսութեան որ ճիւղին էլ նրանք պատկանելիս լինեն, որպէսզի պաշտպանէք ձեր ընդհանուր շահերը և բարելաւէք ձեր դասակարգի դրութիւնը։

Եթէ դուք իւրաքանչիւր գիւղում միանաք և ուրիշ գիւղերի ձեր ընկերների հետ կազմէք, այսպէս ասած, մի ընտանիք, միացած զօրք,— հասկանում էք դուք, թէ ինչ ոյժ կունենաք ձեր ձեռքում։

Այժմ բաժան-բաժան եղած, մէկ-մէկուց օտարացած, դուք ոչ միայն չէք կարող դիմադրել հողատէրերին, այլ, ամեն մէկդ մտածելով և աշխատելով ձեր անձնական հաշուին, դուք ինքներդ փնասում էք ձեզ ձեր մրցումով, ինչպէս այդ մենք արդէն պարզեցինք։

Այն ժամանակ, ընդհակառակը, դուք միացած կլինիք եղբայրական պայմանով, որպէսզի փոխադարձաբար օգնէք մէկ-մէկու և հողատիրոջ հետ վարձի և հողից օգտուելու համար աւելի նպաստաւոր պայմաններ կարողանաք կապել։

Իւրաքանչիւր գիւղում դուք ինքներդ կարող էք որոշել, թէ ինչ պայմաններում պէտք է կատարուի իւրաքանչիւր գիւղին պատկանող հողերի կամ կալուածքների մշակումը։

Եւ որովհետև դուք կսկսէք համերաշխութեամբ գործել և էլ ոչ մի գիւղացի չի ճարուի, որ աշխատանքը չնչին առաջարկէ, ուրեմն պարզ

է, որ եթէ ձեր պահանջները չափազանցութիւն չը համնեն, կալուածատէրերը իրանց հողերը անցանքս և անքաղ չթողնելու համար, պէտք է զիջանեն ձեր պահանջներին։

Այսպիսով, դուք միաբան գործելով, բարի համերաշխութեամբ, գործով քրիստոնէութիւնն իրագործելով, որ քարոզում է սիրել մէկ-մէկու, օգնել մէկ-մէկու որպէս եղբայրներ, և որը դուք մինչև այժմ դա անում էիք միայն խօսքով,— դուք կամաց-կամաց կմեծացնէք ձեր միութիւնը և նրան կամրապնդէք ու կուժեղացնէք։ Իսկ կատարելով այդ, դուք կը կարողանաք մշակների վարձը բարձրացնել, կապալագները պակասեցնել, կալուածատէրերի հետ կապուելիք պայմանները բարելաւել։

Եւ տարէց-տարի ձեր կեանքը աւելի ու աւելի կհեշտանայ, դուք այլ ևս չէք աղքատանայ, լաւ կուտէք-կխմէք, կը հագնուէք. աւելի յարմար բնակարաններ կունենաք, աւելի շատ ժամանակ և միջոց կունենաք, թէ սովորելու և թէ ձեր երեխաներին սովորեցնելու։

Կգայ ժամանակ, որ ձեր մէջ էլ կամրանան այն կարգերը, ինչ որ կան ուրիշ երկրների գիւղացիների մէջ, որոնք կանխել են ձեզ։ Եւ վերջապէս կգայ մի օր, երբ դուք միւս արհեստներով պարապող բանուորների հետ միասին, բոլորովին ազատ կլինիք։

...

ՈՒՐԵՄՆ ԴԷՊԻ ԳՈՐԾ, ԳԻՒՂԱՑԻՆԵՐ

Ժամանակ մի կորցնէք։ Ժամանակ է, որ դուք ևս մտածէք այն բանի մասին, թէ ինչպէս դէն գցէք ձեր վզից աղքատութեան լուծը։ Դուք այդ պէտք է անէք ոչ թէ միայն ձեզ համար, այլ մանաւանդ ձեր երեխաների համար։ Մի՞թ մոռանայ, որ նրանք բաւունք կունենան անիծելու իրանց ծնողեան օրը, եթէ գիւղական աշխատաւորները չը կարողանան դուրս գալ այս թշուառ կեանքից, որին մինչև այժմ դատապարտած էք եղել դուք և ձեր պապերը։

Շուտով դէպի գործ. աւելի լաւ դրութիւն ձեռք բերելու միջոցը կայ և նա ձեր ձեռքին է։ Այդ միջոցը միութիւնն է։

Համախմբուէք, կազմեցէք ձեր ընդհանուր միութիւնը և կը տեսնէք, որ ձեր տէրերի հետ ունենալիք պայմանները դէպի լաւը կը փոխուին։

Հակառակ դէպքում, եթէ դուք առաջուայ նման կսկսէք գործել զատ-զատ, և շարունակել մէկ-մէկու դէմ այդ դաժան պատերազմը, որ մրցում է կոչւում, եթէ շարունակէք սրանից յետոյ էլ անխօս կենդանիների նման աշխատել, ինչպէս անում էիք մինչև այժմ, սնանկանալ, թշուառանալ, մինչև որ ձեռք մեկնէք ողորմութեան,—եթէ այս բոլորը շարունակւի, այն ժամանակ ձեր դժբախտութիւնների մ՝ղքը չը գցէք կալւածատէրերի վրայ և խոստովանեցէք, որ դուք ինքներդ այդ ուզում էիք։ Այո՛, դուք ինքներդ, որովհետև միութիւն կազմելով, դուք կը կարողանայիք աւելի լաւ ապրել, կարող էիք աւելի ուժեղ և անյաղթելի լինել, իսկ դրա փոխարէն քաշ էք գալիս՝ կամքից զրկւած, աղքատութեան մէջ։

Ի՞ՆՉՊԷՍ ԿԱԶՄԵԼ ՁԵՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ես արդէն ասացի, որ դուք պէտք է միանաք ճիշտ այնպէս, ինչպէս այդ արել են զրաշարները, քարտաշները, գործակատարները, երկաթուղային ծառայողները, և միւս բանւորները, որոնք միացել են՝ հաւաքական ոյժերով պաշտպանելու իրանց արհեստի շահերը։ Դա մի այնպիսի միութիւն է, որ ներկայ օրէնքներն էլ թոյլատրում են և դուք, առանց վախենալու հետևանքներից, կարող էք կազմել այդպիսին, ոչ ոք իրաւունք չունի մի փոքրիկ անախորժութիւն անգամ պատճառելու դրա համար։ Չէ՞ որ դուք չէք հաւաքւում բռնութիւն ստեղծելու համար, որ մի որևէ անօրէն բան կատարէք, այլ նրա համար, որ հնարաւորութիւն ունենաք աւելի թանկ գնով ծախել ձեր ձեռքերի աշխատանքը, որ հետզհետէ, խաղաղ ճանապարհով ձեռք բերէք աւելի լաւ պայմաններ—կալւածատէրերի հետ։ Եւ այս ձեր իրաւունքն է և նոյնիս ձերի

ամենանուիրական պարտականութիւնը, որի համար ձեզ ոչ ոք չի մեղադրէ։

Ձեր միութեան մէջ պէտք է մտնեն բոլոր գիւղացիները, ինչ տեսակ քաղաքական համոզմունքի տէր էլ լինին նրանք [1])։

Միութիւնն անօգուտ կլինէր, եթէ նա կազմուած լինի միայն այնպիսի գիւղացիներից, որոնք պաշտպանում են հոգևորականութեանը և ամենաչափաւոր քաղաքական պահանջներ են արտայայտում, կամ միայն այնպիսիներից, որոնք պահանջում են հանրապետութիւն և հասարակական կարգերի անմիջական հաստատումն։ Եւ այդ այն պատճառով, որ գիւղացիների միջից մրցումը վերացնելու համար, կալուածատէրերից զիջողութիւններ կորզելու համար, բաւական չէ մի քանի գիւղացիների միութիւնը, այլ անհրաժեշտ է, որ բոլորն էլ համամիտ լինեն։ Դրա համար էլ դուք ոչ մի ուշադրութիւն չպիտի դարձնէք ձեր ընկերների ոչ կրօնական հաւատալիքների և ոչ էլ նրանց քաքաքական համոզմունքների վրայ։ Ով պատկանում է գիւղացիութեան, նա պէտք է մտնի ձեր միութեան մէջ—միայն այն պատճառով, որ նա գիւղացի է, այսինքն այն պատճառով, որ նրա կարիքներն ու շահերը ընդհանուր են միւս գիւղացիների հետ,—իր նմանների հետ, որովհետև ձեր միութիւնը կազմուած է գիւղական մասսայի

1) Այդ մասին տես Ե. Թոփչեանի «Արհեստակցական միութիւններ» գրքոյկը։ Մ. Թ.

շահերի պաշտպանութեան համար և ոչ թէ մի որևէ ուրիշ նպատակի համար։

Դուք բոլորդ կըսկսէք յարգել ձեր ընկերների մտքի ազատութիւնը և սիրով կը վերաբերուիք մէկ-մէկու, նոյնիսկ առանձին համոզմունքներ ունենալով հանդերձ։ Ձեր միութեան մէջ միայն մի մրցութիւն կը լինի, այն է՝ ձեր ընկերական պարտականութիւնների կատարման մրցութիւնը, որ կայանում է այն բանում, որ դուք սիրէք ձեր միութիւնը, որը կլինի ձեր ընդհանուրի հովանաւորը, ձեր ճշմարիտ բարեկամ, ձեր ոյժը. որ աշխատեք նրան աւելի բազմամարդ ու հզօր դարձնել։

ՄԻ՛ ՎԱԽԵՆԱՔ

Իսկ կալուածատէրերը.—կը հարցնեք անշուշտ դուք։ Եթէ նրանք իմանան, որ մենք մասնակցութիւն ունենք գիւղացիական միութեան մէջ, նրանք մեզ գործից դուրս կանեն և հողը կխլեն մեր ձեռքից։

Իսկ մենք ձեզ հետևեալը կը պատասխանենք. չէ՞ որ գրաշարները, ջուլհակները և միւսները նոյնպէս կարող էին վռնդուել իրանց տէրերի կողմից, բայց այնուամենայնիւ նրանց ինքնապաշտպանութեան համար կազմեցին միութիւններ։

Ինչու՞ ուրեմն դուք չէք կարող կազմել ձեր միութիւնը։

Ամենից առաջ, հարկաւոր է նկատել, որ գիւղերում միշտ կը գտնուեն բարի սիրտ և յառաջադէմ համոզմունքներ ունեցող մի որև է հողատէր, որ կը հասկանայ, որ աշխատաւորները իրաւունք ունեն և պէտք է ձգտեն՝ իրանց դրութիւնը բարելաւելու համար, և որ աւելի լաւ է նրանց հնարաւորութիւն տալ միութիւն կազմելու, քան թէ սպասել, որ մի դեղեցիկ օր նրանք, աղքատութեան գագաթնակէտին հասած, խռովութիւն ու շփոթութիւն առաջացնեն և դրանով վնասեն թէ նրանց և թէ բոլոր միւսներին։ Յետոյ, չը պէտք է մոռանալ, որ աւելի շատ է այն գիւղացիների թիւը, որ կալւածատիրոջ հողը կապալով են վերցնում, իսկ նրանց, ծայրայեղ դէպքում, հողից կարող են զրկել միայն կապալի պայմանաժամը լրանալուց յետոյ։

Այսպէս, ուրեմն, պարզ է, որ գիւղացի կապալառները և այն գիւղացիք, որ կախուած ունին ազատամիտ հողատիրոջից, կարող են միութեան մէջ մտնել, առանց վախենալու որևէ վրտանգից։

Միւսներն էլ հնարաւորութիւն կունենան անյայտ մնալ հողատէրերից։ Բաւական է, որ նրանց ճանաչէ միայն իրանց գիւղի բաժանմունքի նախագահը, որի պարտականութիւնն է հաւաքել անդամակցական վճարները։ Միայն նա կը գիտենայ նրանց միութեան պատկանելը։

Եւ եթէ այս նախազգուշութիւններն անհրաժեշտ են, այդ միայն սկզբներում. իսկ յետոյ երբ ձեր միութիւնը կմեծանայ և կուժեղանայ, այն ժամանակ էլ կարիք չի լինի թագնուելու, որովհետև եթէ կալւածատէրերը ձեր ընկերներից մի քանիսին զրկեն աշխատանքից, առանց արդար հիմքերի, այդպիսիները միութեան դրամարկղից նպաստ կստանան, մինչև որ նոր աշխատանք ճարեն իրանց համար։

ԿԱՍԿԱԾԱՄԻՏ ՄԻԹ ԼԻՆԻ

Շատ կարելի է ձեզանից ասողներ լինեն.

—Իսկ կարող ենք մենք հաւատացած լինել, որ մեր փողերը ի զուր տեղը չեն կորչի, դողութիւններ չեն լինի, ինչպէս այդ պատահում է զանազան միութիւններում։

Դրան մենք հետևեալը կպատասխանենք.— ձեր փողերը կը ծախսուեն այնպէս, ինչպէս որ հարկաւոր է; որովհետև այդ բանը կախուած կը լինի հէնց ձեզանից.

Նախ և առաջ, իւրաքանչիւր գիւղում դուք աւելի ազնիւ և յարգուած ձեր ընկերների միջից կընտրէք մի հաւատող, նոյնիսկ, եթէ հարկաւոր էք համարում, կարող էք նրանից պահանջել, որ նա ըզգուշութեան անհրաժեշտ միջոցներ ձեռք առնէ։

Այդ միևնոյն ձևով դուք ամբողջ միութեամբ գանձապահ կընտրէք։ Ապահովութեան գանձապահ կարող է լինել հարուստ մարդ՝ մէկը այն մարդկանցից, որոնք համակրանքով են վերաբերուում բանուորական միութիւններին։ Այդ միևնոյն նախազգուշութիւններով, դուք աւելի խելացի և շնորհալի ընկերների միջից կը նտրէք անդամներ միութեան կոմիտէտի կամ խորհրդի համար։ Ընբաւականանալով միայն ընտրութեամբ, դուք ինքներդ կը հետևէք նրանց գործունէութեանը և վեց ամիսը մի անգամ հաշիւ կը պահանջէք նրանցից և կը ստուգէք, թէ ինչ չափով են նրանք ընդունակ գործիչներ եղել, ինչ չափով են նրանք արդարացրել դէպի նրանց ունեցած ձեր հաւատը։

Մէկ խօսքով, դուք կենդանի հետաքրքրութեամբ կը հետևէք ձեր միութեան գործերի ընթացքին և դրա համար էլ դուք հաւատացած պիտի լինիք, որ ամեն բան իր կարգով կերթայ։ Դուք ինքներդ այնպէս կանէք, որ ձեր միութիւնը ծաղկի։

Բայց մի րոպէ ենթադրենք, որ մի որևէ տեղ բաժանմունքի մի այնպիսի մարդ դուրս դայ, որ ի չարը գործ դնէ ձեր հաւատը և մի քանի կոպէկ կը կորչի։ Ի՞նչ արած. միթէ դա հիմնական պատճառաբանութիւն կարող է լինել միութիւնից հեռանալու համար։ Ո՛չ մի դէպքում։ Ձեր կալուածատէրերի միութիւնների մէջ

էլ նոյնիսկ նրանց բանկերում և արդիւնագործական ընկերութիւնների մէջ, պատահում է, նոյնիսկ շատ յաճախ, որ գանձապահները, գողանալով փողերը, փախչում են։ Սակայն դրա պատճառով հողատէրերը խո չէ՞ն հրաժարուում բանկեր և ընկերութիւններ կազմակերպելուց։

Այդպէս էլ պէտք է վարուէք և դուք։ Կորուստ ունենալու վտանգը չը պէտք է ձեզ վախեցնէ։ Յայտնի է, որ իւրաքանչիւր մեդալ իր հակառակը կողմն ունի. և որ առանց փշի վարդ չի լինում։

Մի օրինակ էլ վերցնենք։ Կարկուտը կամ որդերը կարող են ամբողջ բերքը ոչնչացնել. բայց դուք խո նրանց երկիւղից չէ՞ք դադարում հայ ցանելուց և խաղողի թփեր տնկելուց։

Իսկ չէ՞ որ այն երկիւղը, որի մասին մենք խօսեցինք, աւելի քիչ է, քան կարկուտի և որդերի երկիւղը։ Եւ իսկապէս, ենթադրենք, թէ մի որևէ չարագործի պատճառով, ձեր միութիւնը կորցէ—ասենք, նոյնիսկ 1000 բուբլի։ Եթէ դուք—մասնակցողներդ 1000 հոգի էք.—բայց շատ շուտով ձեր թիւը կարող է հարիւր հազարներ դառնալ—ամեն մէկդ 1 բուբլի կը կորցնէք։ Սակայն ինչ նշանակութիւն կարող է ունենալ 1 բուբլու կորուստը, համեմատած այն օգուտների հետ, որ ձեր միութիւնը կարող է տալ ձեզ։

ՇԱՏ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՆՑՆԻ

Շատ կարելի է մի քանիսը առարկեն.— մինչև որ միութիւնը մեծանայ և ուժեղանայ՝ հողատէրերից որևէ բարեկարգութիւն ստանալու համար, շատ ժամանակ կանցնէ։

Մենք կը կպատասխանենք.—այդ կախուած է ձեզանից։

Շատ ժամանակ կանցնի, եթէ դուք այժմ չը հասկանաք միութեան տուած բարիքները և չը միանաք։ Եւ ընդհակառակը, քիչ ժամանակ կանցնի, եթէ դուք խոհեմ լինիք, եթէ լաւ հասկանաք, թէ ինչ է հարկաւոր անել ձեր թշուառութիւնն ամոքելու համար։

Իսկ առայժմ թող ձեզանից աւելի հասկացողներն իսկոյն և եթ գործի դիմեն. թող նրանք իւրաքանչիւր գիւղում հիմնեն իրանց բաժանմունքները։ Այդպիսին կազմելու համար բաւական է 5—6 հոգի որոնք ցանկանային կազմակերպւել։ Յետոյ իւրաքանչիւր համայնքի, գիւղի այդ առաջին փոքրիկ բաժանմունքները թող յարաբերութեան մէջ մտնեն և ընտրեն իրանց կենտրոնական կոմիտէտը, որի պարտականութիւնն է վարել միութեան գործերը։ Յետոյ այդ ընկերները, եռանդով իրանց գործի հաւատով զինուած շարունակում են պրոպագանդա անել— քարոզել, միութեան օգտակարութիւնը բացատրելու, երկչոտներին խրախուսելու, հակառակորդներին համոզելու համար։ Այդպիսով Գիւղացիական միութիւնը կարծածից աւելի շուտ կը կազմուի։

Հասկանալի է, ի հարկէ, որ գործը սկսողները չը պէտք է հոգեպէս ընկճուին դժւարութիւնների առաջ, որ կը պատահին նրանց։ Յայտնի է, որ իւրաքանչիւր գործ սկզբում դժւար է լինում։

Չը պէտք է նաև անհամբեր լինել։ Իւրաքանչիւր պտուղ հասնելու համար ժամանակ է պահանջում։ Երբ դուք գարնան սկզբին ցորենէք ցանում, դուք—գիւղացիներդ շատ լաւ գիտէք, որ պէտք է մինչև յուլիս, օգոստոս սպասել և միայն այն ժամանակ քաղն սկսել։ Ճիշտ այդպէս էլ դուք չը պիտի պահանջէք, որ ձեր միութեան բարեբեր ծառը իսկոյն և եթ հասունանայ և պտուղներ տայ. չէ՞ որ նա պէտք է ժամանակ ունենայ բուսնելու, զարգանալու, մեծանալու և հզօրանալու համար։

ԶԳՈՒՇԱՑԷՔ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՑ

Կարող է պատահել, որ շատ մարդիկ, իրանց տգիտութիւնից կամ անձնական օգուտի համար, ամեն կերպ աշխատեն խանգարել ձեր միութիւնը։ Նրանք ձեր մէջ անվստահութիւն և երկչոտութիւն կը ցանեն—նրանք կը ծաղրեն և

կասկածով կը հետևեն ձեր միութեան անդրանիկ ընկերներին և նրանց կզրպարտեն։ Եթէ մի որևէ թերութիւն կամ սխալ պատահի, որ ամեն մի գործի սկզբում անխուսափելի է, նրանք կաշխատեն անպատճառ ուռեցնել այդ։ Առհասարակ նրանք ամեն տեսակ միջոցների կը դիմեն, որ ձեզ ստիպեն բաժան-բաժան և վատ ապրել, ինչպէս մինչև այժմ ապրել էք։

Ահա, ուրեմն, գիւղացիներ, միք թոյլ տայ ձեզ խաբելու, միք թոյլ տայ ձեզ գլխից հանելու, միք լսէ ձեր թշնամիներին։ Ձեր խելքով մտածէք, ձեր խղճին լսեցէք, ձեր առողջ դատողութեան հետևեցէք—և ձեզ համար պարզ կլինի, որ ձեր դրութիւնը բարելաւելու համար միայն մի միջոց կայ. այդ միջոցը՝ ձեր փոխադարձ մերձման վերացումն ու միութիւն կազմելն է։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄԵԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0202037